ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 սեպտեմբերի 2023 թվականի N 330-Ա

«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԺԱՆՆԱ ԿԱՓՈՒՆՑԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 34-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, Անահիտ Պետրոսյանի ներկայացրած փաստաթղթերը և 2023 թվականի սեպտեմբերի 12-ի հարցազրույցի N 1 արձանագրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 13-ից «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հավակնորդ Անահիտ Պետրոսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:
2. Ժաննա Կափունցին 2023 թվականի սեպտեմբերի 13-ից ազատել «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 12
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712600290